

ՆՇԼԼԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակազմի
իրավախորհրդատվական ծառայության փորձագիտական-
վերլուծական բաժնի առաջատար մասնագետ

ԱՆՁԻ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

«Արժանապատվություն» եզրույթը, սկսած անտիկ ժամանակաշրջանից, զբաղեցրել է փիլիսոփաների ուշադրությունը՝ հետագայում դառնալով գիտության տարբեր ճյուղերի ուսումնասիրության առարկան: Եզրույթն օգտագործվում է իրավունքի տարբեր ճյուղերում և դառնում համապատասխան ճյուղն ուսումնասիրող գիտության առարկան, սակայն, այս ամենով հանդերձ, ոչ մասնագիտական գրականության մեջ, ոչ էլ որևէ իրավական ակտում տրված չէ «արժանապատվության» բնութագրումը: Արդյունքում չկա որևէ տարբերակում արժանապատվություն եզրույթի՝ իրավունքի տարբեր ճյուղերում օգտագործվող տարբերակների միջև, նույն ինքը՝ «արժանապատվություն» եզրույթը, չի ընկալվում միանշանակորեն, ինչի արդյունքում չի ապահովվում սահմանադրաիրավական եզրույթի մեկնաբանության, կիրառության միասնականությունն ու պաշտպանության արդյունավետությունը:

Մասնագիտական գրականության մեջ մասնագետների մի մասի կողմից «արժանապատվությունն» ընկալվում է որպես կոնկրետ իրավական համակարգի առանձնահատկություններով պայմանավորված կատեգորիա¹, որպես մարդու իրավունք², որպես մարդու իրավունքների հիմք³: Կարծում ենք՝ այս մոտեցումները գոյության իրավունք ունեն, սակայն դրանցից ոչ մեկը չի բացահայտում «արժանապատվության» էությունը, պարզապես շոշափում են վերջինիս դրսևորման որոշակի կողմերը: Գտնում ենք, որ քննարկվող եզրույթի բովանդակությունը պետք է փնտրել անձի արժանապատվության պաշտպանության և վերաբերելի եզրույթի զարգացման պատմության համատեքստում:

Այսպիսով, «արժանապատվություն» եզրույթը ծագում է լատիներեն dignitas բառից, որը հռոմեական դասական մտածողության շրջանակներում նշանակել է կարգավիճակ: Հարգանք և պատիվ էր վայելում այն անձը, ով արժանանում էր դրան՝ ելնելով այս կամ այն կարգավիճակն ունենալուց: Dignitas-ը, ըստ էության, ոչ թե անհատին, այլ պետությանը և հանրային պաշտոններին վերագրվող հատկանիշ էր: Դասական հռոմեական

մտածողության շրջանակներում քննարկվող եզրույթի ավելի լայն հայեցակարգը զարգացրել է Ցիցերոնը, ըստ որի՝ dignitas-ը պատկանում էր յուրաքանչյուր մարդու, մարդու այդպիսին լինելու ուժով՝ անկախ որևէ լրացուցիչ կարգավիճակից⁴: Ցիցերոնը հիմք է դնում «արժանապատվություն» եզրույթի նոր ընկալման, որի շրջանակներում արժանապատվությամբ օժտված էր

1. բացառապես մարդը,
2. արժանապատվությամբ օժտված էին բոլոր մարդիկ,
3. մարդն օժտված էր արժանապատվությամբ մարդկային ցեղին պատկանելու ուժով:

Միջին դարերում հումանիստները բարձրացնում են այն գաղափարը, որ մարդն օժտված է արժանապատվությամբ, քանի որ ստեղծված է Աստծո կերպարով, ինչն առանձնացնում է մարդուն այլ արարածներից: Միջնադարում արժանապատվության մեկնաբանության հայեցակարգը համարվեց մեկ հեղափոխական դրույթով, համաձայն որի, լինելով Աստծո կերպարով ստեղծված էակ, մարդն օժտված է անհատի (person) արժանապատվությամբ. նա ինչ-որ մեկն է, այլ ոչ թե՝ ինչ-որ բան⁵: Սա արմատական դրույթ է անձի արժանապատվության էության բացահայտման համար. փաստորեն, մարդու արժանապատվությունը կայանում է նրանում, որ նա ինչ-որ մեկն է, այլ ոչ թե՝ ինչ որ բան: Արժանապատվության գաղափարը զարգացվում է՝ նշելով, որ անձն օժտված է բանականությամբ, ինքնատիրապետմամբ, կամքի ազատությամբ և այլ անձանց հետ հաղորդակցվելու հնարավորությամբ⁶:

Վերածննդի ժամանակաշրջանում արժանապատվությունը քննարկվում է Աստծո կողմից մարդուն տրված պարգևների հետ փոխհամաձայնության լույսի ներքո. Պիկո դելա Միրանդոլան իր «Մարդու արժանապատվության մասին հռետորության» մեջ նշում է, որ «մարդու արժանապատվության արմատները մարդու՝ ով լինելու ընտրության հնարավորությունն է, և սա Աստծո պարգևն է»:

Արժանապատվության բովանդակության բացահայտման համար հատկանշական է Կանտի

www.lawinstitute.am

վերաբերելի դիրքորոշման վկայակոչումը: «Բարոյականություն մետաֆիզիկան» աշխատության մեջ Կանտն արտահայտում է այն գաղափարը, որ անձի արժանապատվության բովանդակությունը պահանջում է, որ մարդուն վերաբերեն որպես նպատակի և ոչ թե միջոցի: Կանտը որոշակի այլ ձևակերպմամբ կրկնել է դեռևս Կաթոլիկ եկեղեցու կողմից որդեգրած այն սկզբունքային մոտեցումը, ըստ որի՝ մարդու արժանապատվությունը կայանում է նրանում, որ նա ինչ-որ մեկն է, այլ ոչ թե ինչ-որ բան: Մարդուն որպես ինչ-որ բան վերաբերվելու դեպքում նա, փաստորեն, դառնում է միջոց, գործիք որևէ այլ նպատակի հասնելու համար:

«Արժանապատվություն» եզրույթը հենց վերոնշյալ բովանդակությամբ էլ ամրագրվել է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում: Հռչակագրի 1-ին հոդվածում նախատեսվում է, որ բոլոր մարդիկ ծնվում են ազատ և հավասար իրենց արժանապատվությամբ և իրավունքներով: Դրույթի տրամաբանությունը շարունակվում է նույն հոդվածի հաջորդ նախադասությամբ՝ մարդիկ օժտված են բանականությամբ և խղճով: Հոդվածի տրամաբանությունից պարզ է դառնում, որ մարդիկ ազատ են, հավասար և օժտված են արժանապատվությամբ այն բանի ուժով, որ հանդես են գալիս որպես բանականությամբ և խղճով օժտված էակներ: Դեռևս միջնադարում ձևավորված արժանապատվության հայեցակարգի՝ հռչակագրում ամփոփված լինելու մասին է վկայում նաև Հռչակագրի 6-րդ հոդվածը, համաձայն որի՝ բոլոր մարդիկ իրավունք ունեն ամենուր ճանաչվելու անհատ (person) օրենքի առաջ: Այս դրույթով ևս իրավական մակարդակում ճանաչվում է մարդու արժանապատվությունը, ինչի ուժով մարդը ինչ-որ մեկն է (person՝ անհատ), ոչ թե ինչ-որ բան: Հռչակագրի այս դրույթով մարդը ճանաչվում է իրավունքի սուբյեկտ, ինչն էլ իրենից ներկայացնում է անձի արժանապատվության իրավական ճանաչման դրսևորումը: Ասվածի տրամաբանական շարունակությունն են հանդիսանում այն բոլոր իրավունքները և ազատությունները, որոնք տեղ են գտել Հռչակագրում: Դրանք կոչված են բավարարելու արժանապատվությամբ, այսինքն՝ Աստծո կողմից ստեղծված բանականությամբ, խղճով և ազատ կամքով օժտված էակի կենսական պահանջները հասարակական կյանքի բոլոր ոլորտներում: Մարդու նման ընկալումը արտացոլում է նաև արժանապատվության վերաբերյալ կանտյան հայեցակարգի այն հիմնարար դրույթը, ըստ որի՝ մարդու արժանապատվության բովանդակությունը պահանջում է, որ նրան վերաբերվեն որպես նպատակի, այլ ոչ թե միջոցի: Մարդու արժանապատվության նման ընկալումը

Գերմանիայի Սահմանադրական դատարանի արդարադատության շրջանակներում ստացել է հստակ ձևակերպում՝ որպես օբյեկտ-բանաձև:

Ասվածից հետևում է, որ արժանապատվությունն օբյեկտիվ կատեգորիա է, այն տրվում է մարդուն իր ծննդյան ուժով ու մարդկային ցեղին պատկանելու ուժով և կայանում է բանականության ու խղճով օժտված էակ լինելու և նման կերպ այլոց կողմից ընկալվելու մեջ: Անձի արժանապատվության այս ներքին և արտաքին կողմերը իմպերատիվ կերպով փոխկապակցված չեն. անձի արժանապատվությունը կարող է խախտվել հասարակության կողմից, սակայն նա կարող է պահպանել արժանապատվության ներքին կողմը, և՛ հակառակը: Ասվածից հետևում է, որ անձի արժանապատվությունը կարող են խախտել ոչ միայն պետությունը, հասարակությունը կամ որևէ անձ, այլ հենց ինքը՝ անհատը՝ դրսևորելով մարդու բնույթին հակառակ վարքագիծ:

ՀՀ Սահմանադրության մեջ «մարդու արժանապատվությունը» ևս տեղ է գտել որպես օբյեկտիվ կատեգորիա: Սահմանադրությունն արժանապատվությամբ օժտված լինելը չի պայմանավորում որևէ նախապայմանով. այսինքն՝ ՀՀ Սահմանադրությունը ևս մարդուն օժտում է արժանապատվությամբ մարդկային ցեղին պատկանելու ուժով: Սա բխում է նաև այն բանից, որ Հիմնական օրենքը ճանաչում է բոլորի հավասարությունն օրենքի առաջ և օժտում հավասար իրավունքներով և ազատություններով կամ որոշ իրավունքների պարագայում նման իրավունքներ ձեռք բերելու հավասար հնարավորությամբ, իսկ արժանապատվությունն էլ ճանաչում է այդ իրավունքների անքակտելի հիմք: ՀՀ Սահմանադրությունը մարդու արժանապատվությունը չի պայմանավորում նույնիսկ անձի կամահայտնությամբ. մարդն օժտված է արժանապատվությամբ, նույնիսկ եթե նա չի գիտակցում նման ֆենոմենի առկայությունը սեփական անձի մեջ: Ասվածի մասին է վկայում նաև ՀՀ Սահմանադրության 47-րդ հոդվածի իրավադրույթը, համաձայն որի՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է հարգել այլոց արժանապատվությունը: ՀՀ Սահմանադրությամբ իմպերատիվորեն ամրագրված է պարտավորություն յուրաքանչյուրի համար՝ հարգել այլոց արժանապատվությունը. այս պարտավորությունը կախվածության մեջ դրված չէ անձի կողմից սեփական արժանապատվությունն ընկալելու նախապայմանից: Ասվածի համատեքստում հաճախ առաջ է գալիս մասնագիտական գրականության մեջ «արժանապատվություն» եզրույթին տրված հակասական մեկնաբանությունների արդյունքում ծագող շփոթը, որը հանգում է հետևյալին. ՀՀ քա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

դաքացիական օրենսգիրքը հնարավորություն է ընձեռում դիմելու դատարան և պահանջելու արժանապատվության, պատվի և գործարար համբավի պաշտպանություն: Այս համատեքստում արժանապատվությունը մեկնաբանվում է որպես անձի կողմից սեփական ընդունակությունների, որակների, արժանիքների վերաբերյալ պատկերացում, գնահատական: Մասնագիտական գրականության մեջ հաճախ արժանապատվություն եզրույթի օբյեկտիվ և սուբյեկտիվ իմաստները միմյանցից չեն տարբերակում, և արդյունքում արժանապատվություն եզրույթը գործածվում է սուբյեկտիվ իմաստով՝ որպես անձի՝ սեփական որակների վերաբերյալ սուբյեկտիվ կարծիք, ինչի հետևանքով էլ արժանապատվության առկայությունը կախվածության մեջ է դրվում անձի կողմից սեփական արժանապատվության գիտակցումից և սեփական որակների հանդեպ ունեցած պատկերացումներից: Մինչդեռ, ինչպես արդեն նշվեց, արժանապատվությունն օբյեկտիվ կատեգորիա է և պայմանավորված չէ այս կամ այն նախապայմանով, ուստիև պետք է հստակորեն տարբերակել անձի արժանապատվությունը օբյեկտիվ և սուբյեկտիվ իմաստներով և հաշվի առնել, որ սուբյեկտիվ իմաստով արժանապատվությունը չի հակադրվում օբյեկտիվ իմաստով արժանապատվությանը, այլ բխում է դրանից. այն հանդես է գալիս որպես օբյեկտիվ իմաստով արժանապատվության պաշտպանության սուբյեկտիվ իրավունքի դրսևորում:

ՀՀ Սահմանադրության մեջ «արժանապատվության» որոշակի կողմերը բացահայտող դրույթներ են ամրագրված 3-րդ, 14-րդ և 47-րդ հոդվածներում: Այս հոդվածները գտնվում են անխզելի տրամաբանական կապի մեջ. առաջին դրույթն ունի արժեքաբանական նշանակություն. այն «արժանապատվություն»-ը ճանաչում է որպես բարձրագույն արժեք՝ դասելով մարդու, նրա հիմնական իրավունքների և ազատությունների շարքին, 14-րդ հոդվածն էլ շարունակում է 3-րդ հոդվածի տրամաբանությունը և սահմանում, որ մարդու արժանապատվությունը հարգվում է պետության կողմից, ինչով ՀՀ Սահմանադրությունն ամրագրում է մարդու արժանապատվության հարգման սկզբունքը և այն պաշտպանելու պետության պարտավորությունը: ՀՀ Սահմանադրության մեկնաբանությունների ժողովածուում այս առնչությամբ արդարացիորեն նշվում է, որ «մարդու արժանապատվության ճանաչումը՝ որպես համապարփակ և բացարձակ, պետության կողմից պաշտպանվող սահմանադրական արժեք, հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում անձի իրավական կարգավիճակի կարևորագույն բնութագիրը»¹⁰:

Սահմանադրության 3-րդ հոդվածի ձևակերպումը ստեղծում է այն թյուր տպավորությունը, թե արժանապատվությունը, մարդը, նրա հիմնական իրավունքները և ազատությունները, ինչով գտնվում են հորիզոնական հարաբերակցության մեջ, սակայն 14-րդ հոդվածի առաջին հատվածի ձևակերպումը փարատում է այդ տպավորությունը՝ ամրագրելով մի ձևակերպում, որով բացահայտվում է արժանապատվության և մարդու իրավունքների հարաբերակցությունը, մասնավորապես «արժանապատվությունը» ճանաչվում է որպես մարդու իրավունքների և ազատությունների անքակտելի հիմք: Արժանապատվության հանդեպ որդեգրած նման մոտեցումն էլ գործառական առումով որոշակիորեն երաշխավորում է Սահմանադրությամբ ամրագրված «արժանապատվության հարգման սկզբունքը»: Արժանապատվությունը մարդու իրավունքների անքակտելի հիմք ճանաչելուց հետևում է, որ չկան իրավունքներ և ազատություններ արժանապատվությունից զատ, այսինքն՝ դրանց առկայությունը պայմանավորված է արժանապատվության առկայությամբ, մինչդեռ հակառակ իրավիճակը հնարավոր է այս կամ այն պատմաքաղաքական իրողությունում. պետության կողմից ճանաչվում և պաշտպանության է արժանանում մարդու իրավունքների որոշակի կոնկրետ ծավալ. այդ իրավունքների քանակը չի կարող պայմանավորել արժանապատվության գոյի ավել կամ նվազ աստիճանը, քանզի արժանապատվությունը և իրավունքները տարբեր հարթության վրա են գտնվում: Առաջինը հանգում է մարդու էությանը, բնույթին, ինքնաբավ է, իսկ իրավունքները կոչված են իրացնելու մարդու բնույթից բխող կենսական պահանջները, հետևաբար, եթե այդ իրավունքները նույնիսկ ճանաչված չլինեն պետության կողմից, այսինքն՝ արժանապատվության արտաքին կողմը երաշխավորված չլինի կոնկրետ պետությունում, դեռևս չի նշանակում, որ արժանապատվությունը՝ որպես մարդու էություն, ևս բացակայում է: Այն շարունակում է գոյություն ունենալ որպես օբյեկտիվ կատեգորիա, պարզապես արժևորված և երաշխավորված չի լինում կոնկրետ պետության շրջանակներում: Արժանապատվության՝ իրավունքների և ազատությունների անքակտելի հիմք լինելը որոշում է նաև իրավունքների և ազատությունների բովանդակությունը և ծավալը: Զանի որ մարդու արժանապատվությունը հանգում է մարդու՝ Աստծո կողմից և Նրա կերպարով ստեղծված, բանականությամբ և կամքով օժտված էակ լինելուն, նշանակում է մարդու իրավունքները և ազատությունները, որոնք կոչված են երաշխավորելու նման էակի բնույթով պայմանավորված կենսապահանջները,

www.lawinstitute.am

ևս պետք է լինեն բանական և բխեն մարդու բնույթից: Ասվածի տրամաբանությունից բխում է, որ բոլոր այն իրավունքները և ազատությունները, որոնք հակասում են մարդու բնույթին կամ չեն բխում դրանից, խախտում են մարդու արժանապատվությունը:

Այն հանգամանքը, որ Սահմանադրությունն անձի արժանապատվությունը հռչակում է որպես իրավունքների և ազատությունների անքակտելի հիմք, երբեմն ստեղծում է այն կարծրատիպը, թե արժանապատվություն կատեգորիան ինքնուրույն արժեք չէ, այլ միջնորդավորված է և անանցված իրավունքներից և ազատություններից: Գտնում ենք, որ նման մոտեցումն արդարացված չէ. ՀՀ Սահմանադրության վկայակոչված 47-րդ հոդվածը պարտավորեցնում է բոլորին հարգել այլոց «իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը»: 3-րդ հոդվածով էլ արժանապատվությունն առանձնացվում է և ճանաչվում բարձրագույն արժեք՝ ի թիվս մարդու հիմնական իրավունքների և ազատությունների: Նման ձևակերպումների առկայությունը վկայում է, որ, լինելով իրավունքների և ազատությունների հիմք, արժանապատվությունը, միաժամանակ, ինքնուրույն կատեգորիա է և պահանջում է ինքնուրույն արժևորում և պաշտպանություն: Արժանապատվությունը ՀՀ Սահմանադրության մեջ, փաստորեն, ունի երկակի կեցություն. մի դեպքում այն հանդես է գալիս որպես ինքնուրույն կատեգորիա, մյուս դեպքում՝ որպես հիմք այլ իրավունքների համար: Արժանապատվության երկու կեցությունները հավասարարժեք չեն. առաջինը գերակայում է երկրորդի նկատմամբ, քանի որ արժանապատվությունն է, որպես ինքնուրույն արժեք, ծնում իրավունքներ և ազատություններ, և ոչ թե հակառակը: Մարդու իրավունքներն ու ազատությունները ճանաչվում և պաշտպանության են արժանանում պետության կողմից, քանի որ ճանաչվում է մարդու արժանապատվությունը, այսինքն՝ մարդը ճանաչվում է որպես իրավունքի սուբյեկտ, որպես ինքնանպատակ, որի կենսապահանջների համար անհրաժեշտ են որոշակի իրավունքներ և ազատություններ: Ուստի, մինչև մարդու իրավունքների և ազատությունների հիմք լինելը արժանապատվությունը հանդես է գալիս որպես ինքնուրույն ֆենոմեն, որին ծառայելու նպատակով էլ պայմանավորված են գոյություն ունեցող իրավունքները և ազատությունները: Ասվածից չի հետևում, որ եթե օրենսդրական մակարդակում չի ամրագրվում արժանապատվություն եզրույթը, այլ պարզապես ճանաչվում են մարդու իրավունքները և ազատությունները, դրանք կրում են միայն հռչակագրային բնույթ, քանզի եթե սահ-

մանադրական մակարդակում տեղ են գտնում այնպիսի իրավադրույթներ, որոնք երաշխավորում են մարդու իրավունքի սուբյեկտ լինելը և իրավական համակարգի ինքնանպատակ լինելը, նշանակում է՝ պետությունը ճանաչում է մարդու արժանապատվությունը ընդհանուր սահմանադրաիրավական փիլիսոփայության մեջ: Այլ հարց է, որ պետք է տարբերակել «ճանաչել» և «հարգել ու պաշտպանել» եզրույթները: Մինչև սահմանադրաիրավական բարեփոխումները, ճիշտ է, ՀՀ-ն ընդհանուր սահմանադրաիրավական տրամաբանության մեջ ճանաչում էր արժանապատվությունը, Սահմանադրության 48-րդ հոդվածի ուժով պարտավորեցնում էր «յուրաքանչյուրին հարգել այլոց արժանապատվությունը», սակայն ինքն իրեն չէր սահմանափակում այն հարգելու և պաշտպանելու պարտավորությամբ, մինչդեռ նման պարտավորության առկայության պարագայում քննարկվող օբյեկտի կարևորությունը այլ հարթություն է տեղափոխվում. պետության՝ անձի արժանապատվությունը հարգելու պարտավորությանը զուգահեռ ծագում է անձի անմիջականորեն գործող իրավունքը՝ պահանջելու պետության կողմից արժանապատվության հարգում և պաշտպանություն:

Արժանապատվության գաղափարական ճանաչման և ուղղակի հարգման պետության սահմանադրաիրավական պարտավորությունների շրջանակներում երկու կոնցեպցիա կարող ենք առանձնացնել. առաջին դեպքում արժանապատվությունն ընկալվում է բացառապես որպես իրավունքների և ազատությունների հիմք, երկրորդ դեպքում որպես ինքնուրույն իրավունք՝ ի հավելումն իրավունքների և ազատությունների հիմք լինելուն¹¹: Այս երկու կոնցեպցիաները ունեն ուրույն տրամաբանություն և հանգեցնում են տարբեր հետևանքների մարդու իրավունքների պաշտպանության համակարգում: Առաջին դեպքում արժանապատվությունն ակամա վերածվում է միջնորդավորված արժեքի և կարծես ինչ-որ վերացական կատեգորիայի, քանզի անձը չի կարող դիմել որևէ պետական մարմնի և պահանջել պաշտպանել իր արժանապատվությունը: Այս ընկալման շրջանակներում անձը կարող է պահանջել որևէ խախտված իրավունքի պաշտպանություն միայն, որը ենթադրում է նաև արժանապատվության խախտում, քանզի այս կոնցեպցիայի շրջանակներում արժանապատվության և այլ իրավունքների հարաբերակցության տրամաբանությունը հանգում է հետևյալին. եթե խախտվում է որևէ իրավունք, խախտվում է նաև անձի արժանապատվությունը, ուստի անձը կարող է պահանջել միայն իր խախտված իրավունքի պաշտպանությունը, ինչպես նաև անուղղակիորեն արժանապատվության

www.lawinstitute.am

պաշտպանություն, սակայն այս պարագայում որպես խախտման և պաշտպանության օբյեկտ ընկալվում է կոնկրետ իրավունքը և ոչ թե արժանապատվությունը, և անձը ինքը ևս պնդում է իր կոնկրետ իրավունքի պաշտպանության մասին: Նման վարվելաձևը բացատրվում է նրանով, որ եթե արժանապատվությունը ընկալվում է բացառապես որպես իրավունքների և ազատությունների հիմք, բացառվում է դրա գոյությունը այդ իրավունքներից և ազատություններից դուրս, բացառվում է դրա ինքնուրույն գոյությունը, հետևաբար արժանապատվության ինքնուրույն պաշտպանության անձի իրավունքը: Հենց այս կոնցեպցիան էր դրված ՀՀ Սահմանադրության հիմքում մինչև սահմանադրաիրավական բարեփոխումները¹²:

Սահմանադրական բարեփոխումների արդյունքում պետությունն ամրագրեց արժանապատվության հարգման պարտավորությունը, որը ծնում է անձի իրավունքը՝ պահանջելու անմիջականորեն արժանապատվության պաշտպանություն պետության կողմից. այս պայմաններում արժանապատվությունը միջնորդավորված պաշտպանությունից ձեռք է բերում ակտիվ և անմիջական պաշտպանության հնարավորություն: Նման պայմաններում, օրինակ, անձը հնարավորություն ունի դիմելու սահմանադրական արդարադատության մարմին՝ պահանջելով որոշել վիճարկվող օրենքի համապատասխանությունն իր արժանապատվությանը: Նման փորձ առկա է Ռուսաստանի Դաշնության սահմանադրական արդարադատության համարկարգում: Այս մասին են վկայում ՌԴ սահմանադրական դատարանի՝ 1996 թվականի մայիսի 16-ի, 2007 թվականի հունիսի 27-ի որոշումները: Դատարանը, քննության առնելով դիմումները, բացահայտել է արժանապատվության բովանդակության որոշակի դրսևորումները, արժանապատվության հարգման՝ պետության պարտավորության վերաբերելի կողմերը և համադրել դրանք վիճարկվող դրույթներից բխող իրավակարգավորումների հետ:

ՀՀ-ում դեռևս չի ձևավորվել անձի արժանապատվության անմիջական պաշտպանության իրավունքի գիտակցությունը ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածի միջոցով: Ասվածի մասին է վկայում սահմանադրական արդարադատության շրջանակներում դիմողների՝ վիճարկվող դրույթների ՀՀ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ ներկայացված փաստարկների ուսումնասիրությունը, մասնավորապես դիմողները հազվադեպ են պահանջում որոշել վիճարկվող դրույթների համապատասխանությունը Սահմանադրության 14-րդ հոդվածին. այն եզակի դեպքերում էլ, երբ վերջինս հիշատակվում է, դիմողները որևէ հիմնավորում վիճարկվող դրույթի՝ արժանապատվությունը հարգելու իրավունքին հակասելու վերաբերյալ չեն ներկայացնում: Դիմողները պարզապես վկայակոչում են նշված հոդվածը, սակայն շարունակում են հիմնավորել միայն այս կամ այն իրավունքի խախտումը վիճարկվող դրույթի կիրառման արդյունքում. նշվածի հետևանքով ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածով նախատեսված իրավակարգավորումը ձեռք է բերում բացառապես հոչակագրային բնույթ, մինչդեռ կարող է դառնալ ՀՀ Սահմանադրության գերակայության և մարդու իրավունքների պաշտպանության գործուն կառուցակարգ: Կարծում ենք՝ այս իրավիճակը կարող է շտկվել սահմանադրական արդարադատության շրջանակներում. «արժանապատվություն» եզրույթի և արժանապատվության հարգման պետության պատավորության բովանդակային սահմանանները կարող են տեղ գտնել Սահմանադրական դատարանի որոշումներում՝ իրավական դիրքորոշումների տեսքով, որոնց միջոցով կհստակեցվի «արժանապատվության» և այն պաշտպանելու պետության պարտավորության բովանդակային չափանիշները՝ հիմք հանդիսանալով թե՛ իրավաստեղծ, թե՛ իրավակիրառ գործունեության համար:

¹ Տե՛ս The European Journal of International Law, Vol.19, no.4 EJUL 2008, էջ 655:

² Տե՛ս Federal Constitutional Court of Germany, February 5, 2004 (BVerfGE 109, 133, 181).

³ Տե՛ս Co..Co..A..Comparing Constitutional Adjudication, Summer School on Comparative Interpretation of European Constitutional Jurisprudence, 2nd Edition – 2007, էջ 2, The Dignity of Man in Constitutional Adjudication.

⁴ Տե՛ս Cicero De Officiis I translated with an Introduction and Notes by Andrew P. Peabody (Boston: Little, Brown, and Co.(1887): Աղբյուրը՝ http://oll.libertyfund.org/?option=com_staticxt&staticfile=show.php%3Ftitle=542&chapter=83344&layout=html&Itemid=27 (08.10.2012).

⁵ Տե՛ս The Catechism of the Catholic Church, Part One: The Profession of Faith, Section 2: The Profession of the Christian Faith, Chap. 1, Art. 1, paras. 6 and 356 – 357, աղբյուրը՝ www.vatican.va/archive/ (10.10.2012) catechism/pls2c1p6.htm

⁶ Տե՛ս նույն տեղում:

⁷ Տե՛ս Pico Della Mirandola: Oration On the Dignity Of Man (15th C. CE), աղբյուրը/
http://public.wsu.edu/~brians/world_civ/worldcivreader/world_civ_reader_1/pico.html, (16.11.2012 թվ.).

⁸ Տե՛ս Human Dignity and Bioethics: Essays Commissioned by the President’s Council on Bioethics,
աղբյուրը/http://bioethics.georgetown.edu/pcbc/reports/human_dignity/chapter13.html#endnote5, (16.11.12 թվ.).

⁹ Տե՛ս EUROPEAN COMMISSION FOR DEMOCRACY THROUGH LAW (VENICE COMMISSION) The principle of respect for human dignity, Montpellier, 2-6 July 1998, աղբյուրը՝ [http://www.venice.coe.int/docs/1998/CDL-STD\(1998\)026-c.asp#_ftnref91\(07.12.12\)](http://www.venice.coe.int/docs/1998/CDL-STD(1998)026-c.asp#_ftnref91(07.12.12)).

¹⁰ Տե՛ս ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ, Երևան, 2010, աղբյուրը՝
<http://concourt.am/armenian/library/cclibrary/2010/sahmanadrakan2010.pdf> (06.12.12).

¹¹ Տե՛ս Խոսքը վերաբերում է ոչ թե արժանապատվության իրավունքին՝ որպես արժանապատվություն ունենալու իրավունք, այլ պետության կողմից արժանապատվության հարգում պահանջելու իրավունքին, քանզի, ինչպես արդեն նշել ենք, արժանապատվությամբ օժտված են բոլոր մարդիկ՝ մարդկային ցեղին պատկանելու ուժով, և դա իրավունք չէ, այլ տրված իրողություն:

¹² Տե՛ս Խոսքը վերաբերում է պետության կողմից արժանապատվության հարգում պահանջելու՝ անձի սուբյեկտիվ իրավունքի բացակայությանը մինչ սահմանադրաիրավական բարեփոխումները, քանզի մինչ այդ անձի արժանապատվության պաշտպանության սուբյեկտիվ իրավունքը երաշխավորված է եղել, ըստ էության, զրպարտության և վիրավորանքի առնչությամբ միայն:

РЕЗЮМЕ

Конституционно-правовое содержание «достоинства личности»

В рамках статьи автор выявляет смысл понятия «достоинство личности», рассматривает смысл данного понятия в процессе его исторического развития и основные концептуальные подходы толкования понятия «достоинства личности». Автор предлагает разграничение между объективным и субъективным смыслами понятия «достоинства личности», и выявляет основное соотношение между правом на защиту достоинства личности и правом на защиту чести, достоинства и деловой репутации. Автор рассматривает конституционное бытие «достоинства личности» в свете конституционных реформ принявших место в Республике Армения в 2005 году. Автор рассматривает позитивные обязательства государства вытекающие из таких конституционных урегулирований «достоинства личности» как признание достоинства личности как конституционного блага и прямого обязательства государства уважения и защиты «достоинства личности». Автор рассматривает механизмы защиты достоинства личности и выявляет новые возможности такой защиты в рамках конституционного правосудия.

SUMMARY

Constitutional content of the «human dignity»

In the article the author discussed the problems concerned with the content of the notion «human dignity». The content of the relative notion has been controversial topic in the legal literature for several years. The notion itself has been in use for several centuries, anyway, neither in any legal act, nor in legal literature the respective notion has not been defined completely. The author highlighted the content of «human dignity» in the light of its historical development. The author presented the main criteria on which the contemporary concept of «human dignity» is based. The author differentiated such categories as objective and subjective meanings of «human dignity», showed the correlation between the right to protection of dignity and right to demand protection of reputation. The author discussed the «human dignity» in the logic of constitutional amendments taken place in the Republic of Armenia in 2005, and showed the possibility of using new mechanisms for protection of «human dignity». The author discussed the constitutional axiology of «human dignity». The author also highlighted the new possibilities in protection of human dignity in the framework of constitutional justice.